

ՅԱՎԱԿՅԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՎ ՆԱՄԱԿՆԵՐ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ

Ս. Էջմիածին

Քիչ առաջ խորագույն վշտով տեղեկացանք Փարիզի առաջնորդարանի միջոցով մեզի հաղորդված լուրը ամենասիրելի Վազգեն Ա. Վեհափառի վախճանման:

Անմիջապես առավոտյան ժամը 8-ին միաբանության անդամներուն և ղպրեվանքի սաներուն հետ համախմբվեցանք Բիբֆահայի մատուռը և հոգեհանգստյան պաշտոն կատարեցինք ի խաղաղություն և հերանություն հոգվույն սիրեցյալ և բազմավաստակ Հայրապետին Ամենայն Հայոց:

Հանուն Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, միաբանության, Ազգային Ընդհանուր Ժողովին, Ազգային Կենդրոնական Վարչության, Կրոնական և Աշխարհական զույգ Ժողովներուն կհայտնենք մեր խորագույն վշտակցությունը Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր դասուն, թեմական առաջնորդաց, եպիսկոպոսաց, վարդապետաց և աշխարհական պատասխանատու անձանց:

Կաղոթենք առ բարձրյալն Աստված, որ ամուր և պայծառ պահե Մայր Աթոռը, երկար և բեղուն կյանք շնորհե ապրող բոլոր ապաստավորաց, շեն ու բարգավաճ ընե վերանկախացյալ մեր Մայր Հայրենիքը իր պետությամբ և ժողովուրդով:

Թող Վազգեն Ա Հայրապետի հիշատակը պայծառորեն շողա հայրենիքի և ողջ հայության կյանքին վրա:

Հաճեցեք անմիջական փութով հայտնել մեզի թաղման արարողության թվականը, որպեսզի անձամբ բերենք մեր և Կիլիկյան Աթոռի մասնակցությունը, մեր հարգանքի տուրքն ընծայելու բազմերախտ Հայրապետի հիշատակին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Սիրո ողջունիվ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս, 18 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Էջմիածին, Հայաստան

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ամբողջ միաբանությունը և հայ հասարակությունը խորապես կողբան անդրամանելի կորուստը մեր Հոգևոր Հոր՝ Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետին և Կաթողիկոսին: Կաղոթենք, որ Տերը անանասան պահե Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին իր հոգևոր պաշտոնյաներով և ժողովուրդով:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

Երուսաղեմ, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Էջմիածին

Սրտի անհուն բեկումով լսեցինք սիրեցյալ Վեհափառ Հայրապետի վախճանման գույժը: Մեր զգացած խոր հուզումը բառերն իսկ կնվաճեն մեր սրտեն:

Մոտ քառասուն տարիներու իր Ամենայն Հայոց Կաթողիկոս, ճշգրիտ ու վավերական պատմություն մը հյուսեց թե՛ կրոնական և թե՛ ազգային գետնի վրա: Շատ դժվարին պիտի ըլլա իր վախճանումով ստեղծված բացը գոցել:

Մեր, եկեղեցական դասուն և թրքահայ ժողովուրդի որդիական խոր ցավակցությունները և աղոթքը՝ հանգուցյալ Հայրապետի հոգվո խաղաղության: «Տէ՛ր, զեկեղեցի քո անշարժ պահեա»: Ամեն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈ ՀԱՅՈՑ

Երևան, 19 օգոստոս 1994 թ.

ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐ ԿՐՈՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՎՅԱՆԻՆ

Ս. Էջմիածին

Այս պահին, երբ մեծ Կաթողիկոս Վազգեն Առաջինը, իր ժողովրդին մատուցած երկարատև և բեղմնավոր ծառայությունից հետո բաժանվում է մեզանից՝ մտնելու համար երկնավոր Հոր տունը, ցանկանում եմ հայտնել Ձերդ Գերաշնորհության, ինչպես և ձեր Եկեղեցու բոլոր անդամներին իմ խորագոյաց վիշտը: Աղոթում եմ Տիրոջը, որ ընդունի նրան խաղաղության և լույսի իր հավերժական օթևանում:

ՊԱՊ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ ԵՐԿՐՈՐԴ

Վատիկան, 19 օգոստոս 1994 թ.

* * *

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ս. Էջմիածին

Խոր վշտով ընդունեցինք Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, ձեր Եկեղեցու մեծ առաջնորդ Վազգեն Առաջինի մահվան լուրը:

Որբացած Հայ Առաքելական Եկեղեցուն Ձեր Սրբազնության միջոցով հայտնում ենք Տիեզերական Պատրիարքության և անձամբ Մեր ցավակցությունները՝ աղոթելով, որ կյանքի և մահվան Տերը Մեր ննջեցյալ Եղբոր հոգուն հանգստություն տա արդարների և հանգուցյալների երկրում: Թող Աստված օգնի ձեզ՝ արժանի հաջորդ ընտրելու գործում:

Տեղեկացնում ենք նաև, որ Կաթողիկոսի հուղարկավորության արարողությանը ներկա է լինելու Շվեյցարիայի մեր արքեպիսկոպոս Դամասկինոսը: